

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածը չի բխում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **23**-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի, մասնավորապես, առգրավումը վարչական տույժի տեսակ չէ:

Բացի դրանից՝ վարորդական վկայականից զրկելու հետ կապված դրույթները չեն բխում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 18-րդ և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 264-րդ հոդվածների պահանջներից, մասնավորապես, վարորդը զրկվում է տրասնպորտային միջոցը վարելու իրավունքից, այլ ոչ թե վարորդական վկայականից օգտվելու իրավունքից:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներին:

2. 13-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված տուգանքի չափը չափազանց մեծ է:

3. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի`

1) 40-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, նախագծի վերնագիրն անհրաժեշտ է գրել մեծատառերով.

2) նույն հոդվածներում կատարվող փոփոխություններն անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածում.

3) 70-րդ հոդվածի պահանջները, 10-րդ հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով, իսկ 11-րդ հոդվածում «խմբագրությամբ» բառը` «բովանդակությամբ» բառով:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս` հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով`

ՏԻԳՐԱՆ

ՍԱԲԳՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասում «վարելու իրավունքից զրկում» բառերը փոխարինել «վարորդական վկայականից օգտվելու իրավունքից զրկում» բառերով, իսկ «վեց ամիս ժամանակով» բառերից հետո լրացնել «առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 124³ -րդ հոդվածի 3-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքից զրկում վեց ամիս ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 3. Օրենսգրքի 124⁴ -րդ հոդվածի 6-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքից զրկում վեց ամիս ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 4. Օրենսգրքի 124⁵ -րդ հոդվածի 8-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետեւյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքից զրկում երեք տարի ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 5. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասում «0,5» թիվը փոխարինել «0,4» թվով, իսկ «1,6» թիվը փոխարինել «0,8» թվով:

Հոդված 6. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 3-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքնից զրկում մեկ տարի ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 7. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքնից զրկում մեկ տարի ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 8. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 6-րդ մասը «առաջացնում է» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ «վարորդական վկայականից օգտվելու իրավունքնից զրկում երկու տարի ժամկետով առգրավելով վարորդական վկայականը եւ այն պահելով մինչեւ զրկման ժամկետի ավարտը»:

Հոդված 9. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 9-րդ մասում «**0,8** թիվը փոխարինել **0,4** թվով, իսկ «**0,4**» թիվը փոխարինել «**0,2**» թվով:

Հոդված 10. Ավելացնել հետևյալ հոդվածը

Հոդված 248՝ . Անմեղության կանխավարկածը

Անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ ապացույցներով հաստատված է նրա կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստը:

Վարչական պատասխանատվության ենթարկվող անձը պարտավոր չէ ապացուցել իրեն վերագրվող իրավախախտումը իր կողմից կատարված չլինելը:

Վարչական իրավախախտումն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի:

Հոդված 11. Օրենսգրքի 254-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

Արձանագրությունը կազմվում է 2 օրինակով: Մեկ օրինակը հանձնվում կամ պատշաճ ձևով ուղարկվում է հասցեատիրոջը, մյուս օրինակն ուղարկվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության համար լիազորված մարմնին (պաշտոնատար անձին):

Հոդված 12. Օրենսգրքի 256-րդ հոդվածը ուժը ճանաչել կորցրած:

Հոդված 13. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ մասը «**30** օրվա ընթացքում» բառերից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«վերջինս պարտավոր է վճարել տուգանքը:

Նշված ժամկետում տուգանքը չվճարելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար սահմանվում է տուժանք՝ տուգանքի գումարի **0,15** %-ի չափով, բայց ոչ ավել, քան կետանցման **6** ամսվա համար:

Հոդված 14. Օրենսգրքի **305**-րդ հոդվածի **6**-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենսգրքի **306**-րդ հոդվածում «քաղաքացիական» բառը փոխարինել «վարչական» բառով:

Հոդված 16. Օրենսգրքի **308**-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տուգանք նշանակելու մասին որոշման կատարման վարույթը համարվում է ավարտված՝

ա) երբ տուգանքի ենթարկված անձի կամ հարկադիր կատարողի կողմից տուգանքը եւ, եթե կա, տուժանքը լրիվ վճարվել է համապատասխան հաշվեհամարին,

բ) երբ լրացել է վարչական տուժեր նշանակելու մասին որոշման կատարման՝ սույն օրենսգրքի **302**-րդ հոդվածով որոշվող, վաղեմության ժամկետը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման

Հոդված 1. Օրենսդրությամբ տրված կամ ձեռք բերված իրավունքից անձին կարող է զրկել միայն դատարանը: Տվյալ դեպքում խնդիրը ոչ թե իրավունքից զրկումն է, այլ իրավունքից օգտվելը կասեցնելը: Այս հարցն արդեն իսկ կարգավորված է Հայաստանի Հանրապետությունում **08.02.2006**թ. ուժի մեջ մտած «Ճանապարհային երթուղիների մասին» միջազգային կոնվենցիայի **42**-իդ հոդվածով, որով նախատեսվում է «վարորդական վկայականից օգտվելու իրավունքից զրկում» եւ «իրավասու մարմինը, որը վարորդին զրկել է վարորդական վկայականից օգտվելու իրավունքից, կարող է առգրավել վարորդական վկայականը եւ այն պահել մինչեւ առգրավման ժամկետի ավարտը»:

Հոդվածներ **2**-ի, **3**-ի, **4**-ի, **6**-ի, **7**-ի եւ **8**-ի հիմնավորումները նույնն են, ինչ որ հոդված **1**-ինը:

Հոդված 5. ՀՀ ճանապարհային ոստիկանության տվյալներով տարեց տարի աճում է վարորդների ալկոհոլ օգտագործած լինելու հետեւանքով առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը, զոհվածների եւ վիրավորների քանակը: Այսպէս **2007**թ. ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով **23** հոգի մահացել են վարորդների ոչ սթափ վիճակում գտնվելու պատճառով, ինչը կրկնակի անգամ ավել է **2001** թ. տվյալներից:

Ալկոհոլի թույլատրված նվազագույն պարունակությունը վարորդի օրգանիզմում (**0,8** գրամ **1** լիտր արյան մեջ, կամ **0,4** միլիգրամ **1** լիտր արտաշնչած օդի մեջ) անհամաչափ մեծ է վարորդի սթափ վիճակում գտնվելու համար:

Ավելորդ չենք համարում կրկնել, որ ալկոհոլը ազդում է ռեակցիայի ժամանակի, ճանապարհային իրադրության սթափ գնահատման, գործողությունների ճիշտ կոորդինացման վրա: Հաշվի առնելով միջազգային փորձը, առաջարկում է կրկնակի նվազեցնել օրգանիզմում ալկոհոլի պարունակության թույլատրելի նորմը:

Հոդված **9**-ի հիմնավորումները նույնն են, ինչ որ հոդված **5**-ինը:

Հոդված 10. Առ այսօր, ճանապարհային երթելեկության բնագավառում, տույժի ենթարկելու վերաբերյալ վարչական որոշումը կայացվում է հիմնականում տեսուչի կազմած արձանագրության հիման վրա: Եթե պատասխանատվության ենթարկվողը չի ապացուցում, որ ինքը տվյալ խախտումը չի կատարել, ապա կայացվում է վարչական տույժի ենթարկելու որոշումը: Վարչական մարմինը, խախտելով անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքներից մեկը, ապացուցման բեռը իր վրայից զցում է վարչական պատասխանատվության ենթարկվողի վրա:

Հոդված 11. Տարօրինակ է, բայց գործող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ»(այսուհետ՝ ՎԻՎ) ՀՀ օրենսգրքով մի կողմից պահանջվում է, որ իրավախախտում կատարած անձը ստորագրի կազմած արձանագրությունը (հոդված **255**), մյուս կողմից դրա օրինակը նրան չի տրվում (հոդված **256**-րդ): Բայց քանի որ հիմնականում որոշումը կայացվում է արձանագրության հիման վրա, ապա որոշման բողոքարկման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, բողոքը հիմնավորելու համար բողոքարկողը պետկ է հենվի նաև արձանագրությունում պարունակվող տեղեկությունների վրա, ինչի հնարավորությունից նրան զրկում է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի **256**- րդ հոդվածը:

Հոդված 12. Սույն օրենքի հոդված **11**-ի ընդունումով ՎԻՎ ՀՀ օրենսգրքի **256**-րդ հոդվածը դառնում է ավելորդ:

Հոդված 13. Այստեղ խնդիրը կետանցման դեպքում կիրառող տուժանքն է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի **411**-րդ հոդվածի համաձայն տուժանքը կարող է որոշվել տոկոսներով. կենտրոնական բանկի սահմանած **0,15%**, որը կիրառվում է ամենուրեք, իսկ մեկ օրվա կետանցի համար **200%** կամ **400%** տուժանք նշանակելը միայն կարող է զարմանք եւ բողոք առաջացնել: Բացի այդ. այդպիսի տուժանքներ նշանակելով, բացարձակապես անտեսվում է սոցիալական ֆակտորը: Օրինակ մանկավարժ Գեորգ Վարդանյանի նկատմամբ տուժանքը կազմել էր **800.000** դրամ:

Հոդված 14. ՎԻՎ ՀՀ օրենսգրքի **306**-րդ հոդվածի **4**-րդ մասը ուժը կորցնում է սույն օրենքի **13**-րդ հոդվածի ընդունումով:

Հոդված 15. Առաջարկվող ուղղումը բխում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի **35**-րդ եւ Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի **1**-ին հոդվածներից:

Հոդված 16. ՎԻՎ ՀՀ օրենսգրքի **308**-րդ հոդվածի **1**-ին մասով պարզ չէ, թե ով պիտի կատարի պահանջվող նշումը եւ, եթե արվեց, ապա իրավախախտում կատարած անձի անձնական փաստաթուղթ հանդիսացող որոշումը ինչո՞ւ պետք է վերադարձվի որոշում կայացնողին:

Նույն հոդվածի **2**-րդ մասը բխում է նրա **1**-ին մասից:

Իսկ վարույթը ավարտվելու պայմանը, բնականաբար, պետկ է հանդիսանա միայն տուգանքի վճարումը եւ ուրիշ ոչինչ: